ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE89-FC47-45AE-A036 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/0161/02/26 ք. Երևան
16 Հունվարի 2026թ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Դունամայյանը, քննարկելով «Խաչպար» ՍՊ ընկերության ընդդեմ «ՆՈՐՔ-ՄԱՐԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ընկերության՝ ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/19 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովին որոշակի գործողություններ կատարել պարտավորեցնելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու և պատասխանողից ապացույցներ պահանջելու հարցերը,

ՊԱՐԶԵՑ

հայցվորի ներկայացուցիչը 10.01.2026 թվականին էլեկտրոնային համակարգի միջոցով (այսուհետ նաև՝ Համակարգ) հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ պատասխանող «ՆՈՐՔ-ՄԱՐԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ընկերության՝ ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/19 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովին որոշակի գործողություններ կատարել պարտավորեցնելու պահանջի մասին:

Ներկայացված հայցադիմումը 12.01.2026 թվականին մակագրվել է դատավոր Ա.

Դունամայյանին և Համակարգի միջոցով հասանելի է դարձել 13.01.2026 թվականին:

I. Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը կարծում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

II. Հաշվի առնելով, որ հայցադիմումն ենթակա է վարույթ ընդունման, Դատարանը հարկ է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՆՈՐՔ-ՄԱՐԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ընկերությունից պահանջել ՝ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/19՝ ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

III. Դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5-րդ և 234.9-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑ

1. «Խաչպար» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «ՆՈՐՔ-ՄԱՐԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ընկերության՝ ՝ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/19՝ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովին որոշակի գործողություններ կատարել պարտավորեցնելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

2. ՝ՆՈՐՔ-ՄԱՐԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ընկերությունից պահանջել ՝ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/19՝ ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները,

3. որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, պատասխանողի կողմից ենթակա է կատարման որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում

4. եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2026 թվականի մարտի 01-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

5. Պատասխանողին պարզաբանել, որ վիճարկվող անգործության՝ ՝ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/19՝ ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված Կարգի 67-րդ կետով սահմանված կարգով ՝Սուրեն Հակոբյան Գուրգենի՝ ԱՁ-ի և ՝ԱՐ ՁԻ ԸՆԴ ԷՅ ՁԵՅ ԳՐՈՒՊ՝ ՍՊ ընկերության փոխկապակցված լինելու կամ չլինելու մասին գրավոր եզրակացություն ստանալու համար իրավասու մարմիններին չդիմելու հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ անգործության օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է նա, իսկ վիճարկվող անգործության իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացվել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն

դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:

6. Որոշումն ուղարկելու հետ միաժամանակ պատասխանողին տեղեկացնել հայցադիմումի պատասխան ներկայացնելու իրավունքի և ժամկետի մասին:

7. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Ազատ Դունամայան

ՎԱՎԵՐԱՑՎԱԾ Է
ԴԱՏԱՎՈՐ Ա.
ԴՈՒՆԱՄԱՅԱՆԻ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am